

ՍԻՐԱՆ ՍԵԶԱՅԻ ՎԵՊԵՐՈՒ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Posted on October 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



«Գիրք ծննդոց» եւ «Խորտակուած կեանքեր»

Ն. Գ., Երևան, 20 Հոկտեմբեր 2022

Տարի մը անց կրկին գտնուեցանք Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի (ԳԱԹ) յարկի տակ երկու նպատակով, հակառակ որ Հայրենիքի մէջ կը տիրէր թշնամիներու կողմէ հերթական նախայարձակման մտալլկիչ մթնոլորտ մը:

Յիշեցնենք որ անցեալ տարի Սեպտեմբերին սփիւռքահայ գրող Սիրան Սեզայի գրական հարուստ արխիւը ԳԱԹ-ին յանձնեց Վահագն եւ Անի Զիւլփէլեան ամուլը (Սեզայի որդին եւ հարսը)՝ ընկերակցութեամբ Փրոֆ. Սիլվա Գարայեանի եւ բանասէր Նազելի Գոճայեանի, համոզուած ըլլալով որ արխիւի վերջնական հանգրուանը Հայրենիքն է:

Այս տարի եւս նոյն կազմով Տեր եւ Տիկ. Զիւլփէլեանները իրենց հետ բերած էին ոչ միայն Սեզայի հրատարակած «Երիտասարդ հայուհի»ի պարբերաթերթի ամբողջ հաւաքածոն, արխիւային այլ նիւթեր, այլեւ Սեզայի վաղամեռիկ բանաստեղծ եղբոր՝ Մատթէոս Չարիֆեանի նամակները, որոնք համալրեցին նախապէս դրկուած արխիւային նիւթերը: Նշենք, որ պարբերաթերթի հաւաքածոն յանձնուեցաւ Ազգային Գրադարանին:

Սոյն տարուայ Սեպտեմբեր 15-ին ԳԱԹ-ի սրահին մէջ կայացաւ Սեզայի վերջերս առաջին անգամ հրատարակուած երկու վեպերու շնորհանդեսը՝ տնօրէն Վահագն Սարգսեանի օժանդակութեամբ:

Շնորհանդեսի յայտագիրը վարեց Գայիանէ Սամուէլեանը՝ ելոյթներու ընդմէջէն հատուածներ ընթերցելով Սեզայի վեպերէն: Ողջոյնի խօսքով հանդես եկաւ Վ. Սարգսեանը, որ կարելորեց Սեզա երեւոյթը սփիւռքահայ կեանքին մէջ, քաջալերելով որ մօտիկէն ծանօթանան այս մեծ հայուհիի ստեղծագործութիւններուն:



Վահագն Քիւփէլեան կը մակագրէ

Բանասեր եւ պատմաբան Գեորգ Եազըճեան հանգամանօրէն ներկայացուց Ս. Սեզայի կենսագրականն ու ազգային-հասարակական եւ գրական բեղուն գործունեութիւնը: Գ. Եազըճեան հետեւեռդականօրէն կը զբաղի նաեւ Սեզայի նամակներու ուսումնասիրութեամբ՝ հրատարակելու համար զանոնք:

Չոյգ վեպերու խմբագիր Դոկ. Մինաս Գոճայեանի խօսքը՝ «Սեզան եւ սփիւռքահայ կիներ մեր հասարակութեան մէջ» ներկաներուն մատուցուեցաւ Նազելի Գոճայեանի ընթերցումով: Խօսքին մէջ շեշտուած էր Սեզայի վիթխարի ներդրումը առհասարակ կանանց եւ ի մասնաւորի հայ կանանց ընկերային-հասարակական դիրքի կարելորման գործին մէջ:

Շնորհանդեսի հիմնական բանախօսն էր Բանասիրական գիտութիւններու Դոկտոր Մարգարիտա Խաչատրեանը: Ան հիմնական շեշտը դրաւ «Անցեալի մեր չտվորած դասերից եւս մէկի» վրայ: Բանախօսը ցոյց տուաւ ազգային-քաղաքական այն սխալներն ու թերացումները, որոնց մասին ատենին արտայայտուած էր մեծ գրագիտուհին, սխալներ, որոնք կը կրկնուին մեր օրերուն՝ թե՛ սփիւռքի եւ թե՛ Հայրենիքի մէջ:

Ընտանիքի կողմէ խօսք առաւ որդին՝ գործարար Վահագն Քիւփէլեանը, որ զանազան դրուագներով ներկայացուց մօրը յախուռն ու անզիջող բնաւորութիւնը, եւ իր ընտանիքի

~~Երախտիքի խօսքը ուղղեց ԳԱԹ-ի տնօրէնին եւ շնորհանդէպ բոլոր մասնակիցներուն ու
ներկաներուն:~~

Շնորհանդէպ իր պատշաճ ու բարձր մակարդակի լրումին հասաւ շնորհաշատ երգիչ
Արսէն Համբարեանի Կոմիտասեան երգերու հրաշալի կատարումով:

Հանդիսութեան վերջաւորութեան եղաւ գիրքերու մակագրում եւ հիւրասիրութիւն:

There are no comments yet.